## Հ Ր Ա Մ Ա Ն   N 452-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

**«24» ՕԳՈՍՏՈՍԻ 2018 Թ.                                                  ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ**

«ԵՐԵՎԱՆ» ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆՈՏԱՐ ՎԱՆԻՆԵ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ԵՐԵՎԱՆ» ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆՈՏԱՐ ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով և 22-րդ հոդվածի 4-րդ մասով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության նոտարական պալատի նախագահի Վ. Հովսեփյանի 2018 թվականի օգոստոսի 23-ի N ԵՆՊ-610/18 գրությունը և «Երևան» նոտարական տարածքի նոտար Վ. Հովսեփյանի դիմումը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ   Ե Մ՝

1. 2018 թվականի օգոստոսի 30-ից մինչև սեպտեմբերի 6-ը ներառյալ «Երևան» նոտարական տարածքի (նստավայր՝ «Կենտրոն 4») նոտար Վանինե Հովսեփյանի ժամանակավոր բացակայության ընթացքում նրա կողմից «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-56-րդ և 58-63-րդ հոդվածներով նախատեսված նոտարական գործողություններ կատարելու, ինչպես նաև վավերացված գործարքներում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու կամ դրանք վաղակետ լուծելու լիազորությունները վերապահել «Երևան» նոտարական տարածքի (նստավայր՝ «Կենտրոն 3») նոտար Հայկուհի Հարությունյանին:

**ԱՐՏԱԿ ԶԵՅՆԱԼՅԱՆ**

24.08.2018

X 

Artak Zeynalyan